ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի փետրվարի 18-ին

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
(վերնագիրը խմբ. 23.03.18 ՀՕ-281-Ն)

Հոդված 26. Նպաստները՝ հարկադիր կատարողի զոհվելու, ~~հաշմանդամ դառնալու~~հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու, հիվանդության կամ մարմնական վնասվածք ստանալու դեպքում

Ծառայողական պարտականությունները կատարելիս զոհվելու դեպքում հարկադիր կատարողի ընտանիքի անդամներին կամ նրա խնամքի տակ գտնվող անձանց, ինչպես նաև հարկադիր կատարողին՝ նրա-հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու~~հաշմանդամ դառնալու~~, հիվանդության կամ մարմնական վնասվածք ստանալու դեպքում, վճարվող նպաստի չափն ու վճարման կարգը սահմանվում է զինծառայողների սոցիալական ապահովության հարաբերությունները կարգավորող օրենքներով և իրավական այլ ակտերով:

Հոդված 47. Ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ գործադրելը

1. Հարկադիր կատարողն իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ՝ իրեն ցույց տրված դիմադրությունը կամ ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ իր վրա կատարված հարձակումը կանխելու դեպքում:

2. Արգելվում է հատուկ միջոցների գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ ~~հաշմանդամների~~ հաշմանդամություն ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և հարկադիր կատարողի կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

Հոդված 48. Հրազեն գործադրելը

1. Հարկադիր կատարողն իրավունք ունի հրազեն գործադրելու՝

1) իր վրա կատարված հարձակումը կանխելու համար, եթե առկա է նրա կյանքին կամ առողջությանն սպառնացող իրական վտանգը.

2) հրազենի կամ հատուկ միջոցների հափշտակման փորձերը կանխելու համար:

2. Մինչև հրազեն գործադրելը դա պետք է օգտագործվի նախազգուշական կրակոցի համար:

3. Արգելվում է հրազենի գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ ~~հաշմանդամների~~ հաշմանդամություն ունեցող անձանց և անչափահասների

նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և հարկադիր կատարողի կյանքին ու առողջությանն իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

4. Հարկադիր կատարողին հրազենով ապահովելու կարգը, հրազենի տեսակների և հատուկ միջոցների ցանկը սահմանում է Կառավարությունը:

(48-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-281-Ն)